



11. ԽԱՆՁԱԼԻ ԽԵՔՅԼԱԾ

Կեղի չեղի՝ իրիկ ու կընիկ մի կեղի: Էտ իրիկ ու կնկան ախչիկ մի կեղի:
Էտ շատ հարուստ կ' եղի: Կելի ուրին մշակ մի կպռնա:

Ախչիկ շատ խորոտ կեղի, անուն Խանգալ կ' եղի: Ախչիկ աչք ու տղին
կ'ընգյին իրար: Ձիրար կսիրին:

Յոթ տարի էտ տղեն էտ մարթու տուն նոքյարութեն կեներ:

Տղեն ախչիկն ասաց. - Քյեզի առիմ փախիմ, հըմլա չեղիր:

Տղեն ու ախչիկ խոսքեր կենին մեկ, կը փախին, կերթան, սարի մի
կլոխ: Էնտեղ ուրանց քուլիկ մի կը սարքին, կը նստին ինե:

Կը մնա տարի մի, էտ ախչիկ Աստծու խրամանքյով կը մնա ճժով:
Դետով երկու տղա կը պերա:

Մարթ կելա կերթա սար նեճիր կենա, կառի խավքյ կը պերա:

Էտ Խանգալ օրին մեկ կ'ելի իրկան շորեր կը լվա: Էտ մարթն էլ կ'ելի
սար՝ նեճիրի:

Էն քյաղքյի փաշեն կը տեսի օր թե էտ սարի կլխուց մուխ մը կ'ելի:

Կ' էլի երկու մշակ կը ճամխա, կասա. - Գյանցեք տեսեք ի՞նչ ա տան,
ի՞նչ քյոչ ա:

Կերթան կիրիշկին, կը տեսին խորոտ կնիկ մի թեվեր քյոշթե
չամաշուր կենա, երկու ճիժ վըր չոքյին ա կը ծըծղեցու:

Մըշկներ օր թը կը տեսին խելքյ կերթա ուրանց կընգյին դադի իման
օր Խանգալ շատ խորոտ կ' եղի:

Փաշեն կասա. - Իմ մըշկըներ ան, գյնցան չեկան, էտ ի՞նչ քյոչ ա
դադին:

Կ' էլի երկու մշակ կը ճամխա: Կերթան կիրիշկին կը տեսնան կը գյան:

Կը գյան մըտ փաշեն, կասեն. - Փաշա՛, հալ-հառալ, հըմլա կնիկ մի թևեր քշթեր չամաշուր կենա: Երկու ճժեր վըր չոքյին ա կը ծծղեցու զճժեր: Փաշեն՝ կասա. - Գյանցեք պերեք:

Կը գյան ծեռ կը թալեն կնիկ: Կնիկ կ'էլի, զճժեր կը փաթա, կը թորկա դատի, ինք կ'էլի խըտ մըշկներու՝ կը գյա: Կը գյա, կը տանին փաշի գյեղ: Փաշեն օր թը կը տեսի խնազլուն շատ խավնի, կը պերա յոթն օր, յոթն գիշեր խարսնիս կ'ենա: Յոթ ծեռք դիող-զուռնա կը պերա, խնազլու խետ կը փսակվի:

Խնազալ ու փաշեն թըխ կենան դատի: Դորիիս տաննանք վըր մարթուն:

Մարթն ա կ' էլի նեծիրից կը գյա ուր քյիլըկ: Կտեսի օր թը ճժեր կիլան: Խնազալ դա չըկա, մա կնիկ, մա պորն*:

Կասա. - Ջանը՛մ, էտի վ՛ն ա իմ կնիկ տարիր:

Կէլի մարթն ու գտյուռ կը շարա, ճժեր կը թորկա քուլկի մեչ, ինք տոպրակ մի կը թնլա թեվ, կերթա փաշի գյեղ:

Կերթա պառվու մի ռաստ կը գյա, կասա. - Մամիկ, ես էրթամ փաշի տուն՝ ընծի փըշում օղորմութեն կտա՞:

Կասա. - Հա՛յ, Աստված քյի տուն ավիրա, փաշեն ու խնազալմ պերեր սարեն, էսա յոթ օր, յոթ գիշեր խարսնիս կենա, էսօր տարած մըտ իրնար, մեկտեղած ա, տյիւռ պանց չէ, օր տյիւռ էրթաս ինե, քյեզի օղորմութեն առիս:

Կէլի կասա. - Ապա մամիկ, իմա կյեղի տյիւռ ե՞փ կը պանան, էրթամ ընծի օղորմութեն առիմ:

Կասա. - Իրիկվան տյիւռ կը պանան, գյնա քյե օղորմութեն առ:

Էտ մարթ կը կյա անգյաջ չենա, կէլի տոպրակ թեվ կերթա: Կերթա էտի. փաշի տյիւռ պանց ա: Հուշիկ տյիւռ կը պանա: Տռան ճոռց կէլի, փաշեն կը լա:

Էտ մարթ կերթա կը նստի ճառ: Կյնկան աչք ու մարթուն օր թը կառի իրնար, զիրնար կը ճանչնան: Կնկյան աչքերուց՝ առցունք կը թափի:

Փաշեն գյլոխ տրեր ա վըր խնազլու չոքյին, պառկեր ա, էտ առցունք, կը թափի վըր փաշի էրեսին, փաշեն կիմնա:

Կէլի կասա. - Խնազալ, հորի՞ կի լա:

Կասա. - Ես կիմ, էնա մարթ էկավ. նստավ ճառ, իմ աչք առավ ինե, ես լանցի, իմ աչքերուց առցունք թափավ, խեղճ ա, ֆուխարա մարթ ա:

* Անընթեռնելի (ծ.կ.):

Փաշեն կասա. - Էլի, օր թը խեղճ ա՝ փըշը մը օղորմութեն տուր:
Կընիկ կէլի կերթա մառան, ծեռ կը զանա մըջ օսկուն, կը պերա կը
լցա մարթու գյոգյն:

Փաշեն ֆուխարին կասա. - Դորիս էլի գյնա:

Խազալ կասա. - Իմա՞ էրթա, խելքայնթըմ կասա, ու էլի էրթա:

Կասա. - Կնիկ, ֆուխարա յա, ի՞նչ գյիտա խելքայնթ:

- Չէ, - կասա, - թ'ասա, իմա՞լ չգյիտա:

Ետով ֆուխարեն կը բաշլայա ուր խելքայնթ ասել:

Կասա. - Փաշա, Խնազալ իմուկ ա, իմ Խնազալ տուր, առիմ էրթամ: Ո՞ն
ա տեսեր անլա պան. սարի գյլոխ ճիծեր մնան անօթի, անմեր, անխեր:

Փաշի վերեն քյուն կընցնի, կը քյնի փաշեն: Խնազալ գիրիկ ծեռնով կը
կանչա, կառի կերթա, խանչալ փաշի վերեն կը քյաշա, զփաշեն կը մորթա:

Փաշեն ուր մըշըկներուն ասեր ա՝ հիրիկվան ծիանքը բերեք, օր ես
էրթամ ավգուշ:

Կնիկ փաշեն կը մորթա կը պրծի, կէլի էրկու ծի՝ փաշի օսկին կը
պաննա, չորս ծի էլ հուր ու մուր կը պաննա, յորդան, տոշակ: Դյուռ կը
փակա վըր փաշին, էնտեղ Խնազալ ու իրիկ ա, մեկ ծի մի կը խեծին ու
կերթան:

Կերթան կէլին սարի ծեր մըտ քյուլիկ, կը տեսնի օր ճծեր լացած,
կըպած իրար, քյընած են, թըփողկըցած, փետցած են:

Էնոնք թորկինք տանի, տաննանք վըր փաշին: Փաշի մըշըկներ
կառին զծիանք, հիրկուն կը գյան տուն: Կը գյան կը տեսին՝ փաշի տյուռ
փակ ա:

Կասա. - Ջանըմ, մեր փաշի բեֆ էլ չընցի՞:

Կը մնան չուր իրիկվան օր թը արեւ կը մտի, տյուռ չպանցվի:

Կասա. - Մեզի թամբեխ էրաց, օր թը մենք առնինք զծիանք գյինք
տուն, էնի խեծեր էրթար ավգուշ:

Կասա. - Մեր փաշեն էլ տյ չպանա:

Կէլին գտյուռ ճըրխընե կեցկին, կերթան մըջ տուն:

Կերթան մըջ տան, կը տեսին օր թը փաշեն մըջ յորդան-դոշակին
քներ ա: Ջյուլ կվերցին, կը տեսին օր, թը փաշի վիզ կտրուկ ա:

Էնտեղ մըշըկներ կը թորկեն զչոքեր, կը տաննան ուրանց գյլոխ կը
թփին, թե՛ էսի վո՞ն ա մեր փաշեն մորթեց:

Էնտեղ լալոց-գյոռոց կինգյի էտ գյեղ, կիլան՝ էտոնք, կը տանին
էնտեղ ըզփաշեն կը խորեն:

Էմտեղ զփաշեն թորկինքյ դատ, տանճանքյ վըր Խանգլուն ու ուր իրկան:

Խանգալ ուր իրիկ կիգյան սարի գլոխ, ուրանց հուր ու մուր կը պանճան, կառին ուրանց էրկու ճիժ ու կէրթան վըր ախշկի խոր տուն:

Էտ խեր կը վերցի ախշկին կասա. - Ախշիկ, չէ ես քյեզի ասի՝ մի փախի, մանցի իմ տուն: Ես քյի կը տիրի, ինչի՞ Էլար փախար:

Կը պերա Էլման գուր փեսեն ու ախշիկ կը փսակի վըր իրարու: Էստեղ յոթն օր, յոթ գյիշեր խարսնիս էրեց, տուն մի տվեց ախշկին ու փեսնին: Էնոնք խասսան Բուրանց մուրագին, տուն Էլ քյո:

